ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբեր, 2024 թվականի № 77-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով և 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 10-րդ կետերը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ և 25-րդ կետերը, ինչպես նաև «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի 2024 թվականի նոյեմբերի 29-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված N Ռ/24 01-107 գրությունը և հաշվի առնելով Ընկերության աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի փետրվարի 9-ը ներառյալ ժամանակահատվածի համար նախատեսված Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

2. Հաստատել 2025 թվականի փետրվարի 10-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար նախատեսված Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:

3. Հաստատել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի փետրվարի 9-ը ներառյալ ժամանակահատվածի համար նախատեսված Ընկերության հաստիքացուցակը՝ համաձայն սույն որոշման հավելված 3-ի:

4. Հաստատել 2025 թվականի փետրվարի 10-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար նախատեսված Ընկերության հաստիքացուցակը՝ համաձայն սույն որոշման հավելված 4-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐԶԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

03 դեկտեմբեր, 2024 թվականի

ք. Երևան